ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Նաիրա Գրիգորյան
Եվրասիա միջազգային համալսարանի ասիստենտ,
Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի դասախոս,
տնտեսագիտության թեկնածու

Հայաստանում շուկայական վերափոխումների ժամանակահատվածում փոփոխության ենթարկվեցին ինչպես պետական տնտեսական կարգավորման մեխանիզմներն, այնպես էլ պետական ձեռնարկատիրության ոլորտներն ու ծավալները:

ՀՀ պետական գույքի կառավարումը, հանդիսանալով պետության կարևորագույն գործառույթներից մեկը, հիմնավորվածության տեսանկյունից դեռևս չունի համակարգված հայեցակարգային, ծրագրային, օրենսդրական և նորմատիվային միասնություն:

Պետական կառավարման մարմինների կողմից տնտեսության արդյունավետ կարգավորում իրականացնելու գործընթացում որպես կարևորագույն իրավահարաբերությունների համակարգ հանդես է գալիս պետական սեփականությունը, ուստի առաջնակարգ նշանակություն է ձեռք բերում այդ սեփականության հիմք հանդիսացող պետական գույքի առավել արդյունավետ կառավարումն ապահովող պայմանների ստեղծումը և դրան ուղղված համապատասխան միջոցառումների իրականացումը: Մասնավորապես, հեղինակն առաջարկում է տնտեսության պետական հատվածի առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ մեծացնել պետական գույքի մասնավորեցման գործընթացը՝ մշակել պետական բաժնեմաս ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական, ներդրումային ռազմավարական երկարաժամկետ ծրագրեր և «ՀՀ պետական գույքի ակտիվների կառավարման» հայեցակարգ:

Հիմնաբառեր. պետական գույք, գույքի կառավարում, շուկա, գույքային իրավունք, բաժնեմաս, մասնավորեցում, արդյունավետ կառավարում, «պետություն–մասնավոր» հատված:

Ներկայումս, գրեթե առանց բացառության, աշխարհի բոլոր երկրներում պետական գույքի կառավարումը դարձել է տնտեսության պետական կարգավորման հիմնական ուղղություններից մեկը: Շուկայական հարաբերությունների վրա պետության միջամտության մյուս ձևերի հետ միասին գույքի նկատմամբ այս կամ այն չափով և արդյունավետությամբ պետության սեփականության տնօրինման և տիրապետման իրավունքի իրացումը թույլ է տալիս ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներազդել երկրի տնտեսության ու դրա զարգացման համամասնությունների վրա:

Տնտեսության տարբեր ոլորտներում պետական գույքի չափերն ու բաժինը, դրա ընդգրկվածության աստիճանը կանխորոշվում են երկրի սոցիալ-տնտեսական նպատակահարմարությամբ, աշխարհատնտեսական համակարգում նրա տեղով, տնտեսության մրցունակությամբ, պատմամշակութային ավանդույթներով, գիտատեխնիկական ներուժով, ինչպես նաև՝ բազմաձև սեփականության ձևավորման առանձնահատկություններով

Պետական կառավարման մարմինների կողմից տնտեսության արդյունավետ կարգավորում իրականացնելու գործընթացում որպես կարևորագույն իրավահարաբերությունների համակարգ հանդես է գալիս պետական սեփականությունը, ուստի առաջնակարգ նշանակություն է ձեռք բերում այդ սեփականության հիմք հանդիսացող պետական գույքի առավել արդյունավետ կառավարումն ապահովող պայմանների ստեղծումը և դրան ուղղված համապատասխան միջոցառումների իրականացումը:

ՀՀ պետական գույքի կառավարումը, հանդիսանալով պետության կարևորագույն գործառույթներից մեկը, հիմնավորվածության տեսանկյունից դեռևս չունի համակարգված հայեցակարգային, ծրագրային, օրենսդրական և նորմատիվային միասնություն: Մինչ օրս ՀՀ պետական գույքի կառավարման ոլորտում գերակա ուղղությունը մասնավորեցման գործընթացն է, որի նպատակն է ապահովել բազմաձև սեփականության կազմավորումը:

Ներկայումս տնտեսության մասնավոր հատվածն ապահովում է ՀՀ համախառն ներքին արդյունքի շուրջ 85%-ը՝ ցուցանիշ, որով ՀՀ չի զիջում անգամ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներին, ինչպես նաև՝ զարգացած շուկայական տնտեսություն ունեցող շատ երկրների:[1] Մասնավոր հատվածի ձևավորումը նոր խնդիրներ է ծնում պետական սեփականության կառավարման ոլորտում, այն դարձնելով առավել բազմաշերտ գործընթաց: [2]

Թեև հանրապետությունում շուկայական վերափոխումների սկզբից անցել են երկար տարիներ, սակայն դեռևս մշակված չեն ինչպես շուկայական գործընթացներին պետության միջամտության վերջնական մոտեցում-

1 Ըստ ՎՋԵԲ-ի ընդունած ընթացակարգի՝ մասնավոր հատվածի բաժինը ՀՆԱ-ում հաշվարկվում է պաշտոնական (պետական) և ոչ պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա: Բաժինը ներառում է գրանցված մասնավոր ընկերությունների ստացած եկամուտը ինչպես պաշտոնապես հաշվառվող, այնպես էլ չհաշվառվող գործունեությունից՝ դրա մասին հավաստի տեղեկատվության առկայության դեպքում: Մասնավոր ընկերություններ են համարվում բոլոր ձեռնարկությունները, որոնց բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը գտնվում է մասնավոր ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության ներքո:

2 Մ.Մելքումյան «Պետական գույքի կառավարումը և բիզնեսը», Եր.: 2001թ., 238 էջ:

ները, այնպես էլ՝ պետական սեփականության կառավարման տեսական-մեթոդաբանական հիմնադրույթներն ու սկզբունքները:

Ավելին, դեռևս չի իմաստավորված պետական ձեռնարկատիրության տեղն ու դերը սոցիալտնտեսական զարգացման գործընթացում: Այդ հիմնախնդիրների վերաբերյալ հիմքային-գաղափարախոսական մոտեցումների ոչ լիարժեք մշակվածությունը գործնականում հանգեցնում է գործադիր մարմինների կողմից իրենց գործառույթների ոչ բավարար չափով գիտակցմանը, ինչպես նաև պետական սեփականության տիրապետման, տնօրինման և օգտագործման գործիքակազմի անբավարար կիրառմանը:

Ներկայացնենք 2015-2016թթ. դրությամբ ՀՀ պետական կառավարման մարմինների ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծության արդյունքները (տես, գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ՀՀ պետական կառավարման մարմինների ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշները 2015-2016թթ. դրությամբ[1]

2016 թվականին վերլուծության են ենթարկվել 32 պետական կառավարման մարմինների ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային 190 կազմակերպություններ, որոնցից 120-ն աշխատել է շահույթով, 61-ը՝ վնասով, իսկ 9-ը՝ շահույթ կամ վնաս չի ձևավորել բոլոր ընկերությունների կողմից ձևավորած զուտ շահույթի ընդհանուր ծավալը կազմել է 1706.65 մլն դրամ, իսկ ընդհանուր վնասը՝ 11170.02 մլն դրամ:

2015 թվականի տարեկան արդյունքներով վերլուծության են ենթարկվել

1ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 2015-2016թթ. մոնիտորինգի արդյունքների :

պետական մասնակցությամբ առևտրային 194 կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշները, որից 154-ը աշխատել է շահույթով, 34-ը՝ վնասով, իսկ 6-ը՝ շահույթ կամ վնաս չի ձևավորել, իսկ բոլոր ընկերությունների կողմից ձևավորած զուտ շահույթի ընդհանուր ծավալը կազմել է 8947.8 մլն դրամ, ընդհանուր վնասը՝ 10900.63 մլն դրամ:

Այսպիսով, վերլուծությունների արդյունքում եկանք այն եզրահանգման, որ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշներն աշխատել են ընդհանուր վնասաբերությամբ: Միևնույն ընդհանուր միտումներն արձանագրվել են նաև նախորդ տարիներին:

Հետևաբար, պետական գույքի արդյունավետ կառավարումը վերահիմաստավորման կարիք ունի և պետության տնտեսական կարգավորման գործառույթների համակարգված իրագործման տեսանկյունից պահանջում է հիմնավորվածություն և միասնական քաղաքականության մշակում ու իրականացում:

Այդ իսկ պատճառով կարևոր ենք համարում պետական սեփականություն հանդիսացող տարբեր ակտիվների կառավարման հայեցակարգի մշակումն ու կիրառումը: Մասնավորապես, ուժեղացնելով պետական գույքի կառավարման գործառույթները (ներառյալ՝ գույքի օգտագործման, տնօրինման, համակարգման և վերահսկման գործառույթները)՝ մշակել տնտեսապես հիմնավորված երկարաժամկետ զարգացման ծրագրեր, ստեղծել կանոնակարգված ու գործուն մեխանիզմներ պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման, «պետություն-մասնավոր» հատված գործընկերության ստեղծման համար:

Կարևոր ենք համարում «ՀՀ պետական գույքի ակտիվների կառավարման» հայեցակարգի մշակումն ու գործարկումը, որի հիմնական դրույթներից է պետական գույքի մասնավորեցման, օտարման ոլորտում գնային ճկուն քաղաքականության իրականացումը՝ առաջնահերթությունը տալով ներդրումների ներգրավմանն ու սոցիալական խնդիրների լուծմանը, ինչպես նաև ֆինանսական վարձակալության ներդրումային ծրագրերի մշակումը:

Պետական գույքի կառավարման ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունը պետք է միտված լինի պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպություններում պետության մասնակցության նպատակների հստակ որոշման վրա: Այսինքն, պետական և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեությունը պետք է համապատասխանի մասնավոր առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության չափանիշներին՝ շահութաբերությանը՝ դրանով ապահովելով մասնավոր ընկերությունների հետ հավասար պայմաններում մրցակցելու հնարավորությունը:

Այսինքն, անհրաժեշտ է անցում կատարել պետական գույքի կառավարման այնպիսի մոդելի, որը հիմնված լինի այդ գույքի կազմի պետության գործառույթներին խիստ համապատասխանության սկզբունքի վրա, հակա-

ռակ դեպքում նշված չափանիշներին չհամապատասխանող պետական գույքը պետք է մասնավորեցվի:

Այն հնարավորություն կտա օպտիմալացնել պետական գույքի կազմը և իրականացնել միջոցառումներ տնտեսության պետական հատվածի առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ՝ մասնավորապես մշակելով պետական բաժնեմաս ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական, ռազմավարական երկարաժամկետ ծրագրեր:

Ներկայացնենք պետական գույքի կառավարման ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրությունը, որը վկայում է երեք հնարավոր մոդելների կիրառման մասին.[1]

- ապակենտրոնացված (կամ ոլորտային),
- երկաստիճան
- կենտրոնացված:

Ապակենտրոնացված մոդելը նախատեսում է, որ պետական մասնակցությամբ ընկերությունները կառավարվում են ոլորտային նախարարության կամ ոլորտային իշխանության մարմնի կողմից: Այս մոդելի հիմնական առավելությունն այն է, որ ոլորտային մարմինը, տիրապետելով փորձագիտական, մասնագիտական հմտություններով և ունենալով կառավարման ամբողջ լիազորությունները, կարողանում է իրականացնել ակտիվ արդյունաբերական քաղաքականություն: Սակայն, ներկայումս քաղաքականության նախապատվությունները փոփոխվել են որոշակի ճյուղային ուղղվածությունից դեպի համակարգային տնտեսական քաղաքականություն: Այս պայմաններում ապակենտրոնացված մոդելի առավելությունները չեզոքացվում են: Բացի այդ պետական գույքի կառավարման ապակենտրոնացված մոդելի կիրառմամբ դժվար է տարանջատել պետության՝ որպես սեփականատիրոջ գործառույթները պետության այլ գործառույթներից:

Պետական գույքի կառավարման **երկաստիճան մոդելը** նախատեսում է լիազորությունների տարանջատում ոլորտային նախարարության (կամ ոլորտային պետական մարմնի) և «ընդհանուր» նախարարության միջև, որի օրինակներ կարող են ծառայել Ավստրալիայում՝ ֆինանսների և կառավարման նախարարությունը, Իտալիայում՝ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությունը, Ֆրանսիայում՝ էկոնոմիկայի նախարարությունը: Երկաստիճան մոդելի կիրառման դեպքում երկու պետական մարմիններ՝ ճյուղայինը և ընդհանուրը պատասխանատու են սեփականատիրոջ իրավունքների իրականացման համար: Այս մոդելը նախկինում լայնորեն տարածված էր ՏՀԶԿ երկրներում: Ընդ որում, որոշակի՝ «ընդհանուր» պետական մարմինը հանդես էր գալիս որպես առանցքային, որն ապահովում էր պետական ընկերությունների կառավարման ընդհանուր քաղաքականությունը և համակարգում այդ գործառույթները:

1 А. Пахомов, Международный опыт управления государственной недвижимостью, «ФТ)Центр» (Санкт) Петербург) 2015, ст. 79.

Պետական գույքի կառավարման **կենտրոնացված մոդելում** սեփականատիրոջ գործառույթներն իրականացնում է միայն մեկ գլխադասային նախարարություն կամ պետական մարմին: Այս մոդելն աշխարհում ունի մեծ տարածում:

Այսպես, երկրների մեծ մասում պետական գույքի կառավարման գործառույթներն իրականացնող մարմին է հանդիսանում ֆինանսների նախարարությունը (Դանիա, Նիդեռլանդներ, Իսպանիա, Չեխիա) կամ արդյունաբերության նախարարությունը (Նորվեգիա, Շվեդիա): Բելգիայում այդ նպատակի համար ստեղծված է առանձին նախարարություն՝ պետական և կորպորատիվ իրավունքների նախարարություն: Մի շարք երկրներում այդ նպատակների համար ստեղծվում են առանձին գործակալություններ, որոնք գործում են ինքնուրույն, ունեն կոմերցիոն ուղղվածություն, և, որպես կանոն, հաշվետու են ֆինանսների նախարարությանը: Այդպիսի գործակալություն ստեղծված է, օրինակ, Ֆրանսիայում:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անցումային տնտեսությամբ երկրներում առավել տարածում է ստանում պետական գույքի կառավարման կենտրոնացված մոդելը, ՀՀ-ում նպատակահարմար է կիրառել պետական գույքի (ներառյալ ՀՀ սեփականության իրավունքով պատկանող շենքերի և շինությունների ու դրանց սպասարկման և օգտագործման համար հատկացված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի, առևտրային կազմակերպություններում պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի, պետությանը պատկանող գույքային իրավունքների) կառավարման այդ մոդելին բնորոշ մեխանիզմները:

МЕХАНИЗМЫ ЭФФЕКТИВНОГО УПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННЫМ ИМУЩЕСТВОМ

Наира Григорян
Ассистент Международного университета Евразия,
преподаватель Европейской образовательной региональной академии,
кандидат экономических наук

В период рыночных преобразований в Армении изменения коснулись как механизмов государственного экономического регулирования, так и объемов и сферы государственного предпринимательства.

С точки зрения обоснованности, Управление государственным имуществом РА, являясь одной из важнейших функций государства, пока не имеет систематизированного концептуального, программного, законодательного и нормативного единства.

В процессе осуществления эффективного регулирования экономики органами государственного управления в качестве важнейшей системы правоотношений выступает государственная собственность, поэтому первосте-

пенное значение приобретает создание условий, обеспечивающих более эффективное управление государственным имуществом, являющимся основой этой собственности, и осуществление соответствующих мероприятий, направленных на это. В частности, для повышения эффективной деятельности коммерческих организаций в государственном секторе автор предлагает расширить процесс приватизации государственной собственности: разработать концепцию «Управление активами государственной собственности РА» и долгосрочные стратегические, финансово-экономические, инвестиционные программы для некоммерческих организаций, имеющих государственный пакет акций.

Ключевые слова: государственное имущество, управление имуществом, рынок, права собственности, акция, приватизация, эффективное управление, «государственно-частный» сектор.

EFFECTIVE MANAGEMENT MECHANISMS OF STATE PROPERTY

Naira Grigoryan:
Assistant at Eurasia International University,
lecturer at European Educational Regional Academy,
PhD in Economics

During the period of market transformation in Armenia, the mechanisms of state economic regulation, as well as the spheres and scope of the state entrepreneurship, were altered.

The state property management, being one of the most important functions of the state, has no coordinated conceptual, programmatic, legislative and normative unity.

In the process of the effective regulation of the economy by the public administration bodies, the system of the most important legal relations acts the state property, so it is of primary importance to create conditions that ensure the effective management of the state property that is the basis of that property and the implementation of appropriate measures.

Particularly, the author suggests increasing the state property privatization process by elaborating on the effectiveness of public sector commercial organizations by elaborating long-term financial-economic, investment strategic programs of non-commercial organizations with state-owned shares and by implementing a legislative amendment.

Key words: State property, property management, market, property right, share, privatization, effective governance, «state-private» sector.

1 Առկա է անկախ փորձագիտական հաշվարկ, որ տնտեսական անկումը Ադրբեջանում կազմում է իրականում -4.4%, ներկայացվող 1.1% -ի փոխարեն: